Հաղթահարել

Զգացմունքային

Պայքարազմները

Ասպծո խոսքի

Զորությամբ

ՋՈՅՍ ՄԱՅԵՐ

Օգնի՛ր ինձ. ես

ՎԱԽԵՆՈՒՄ ԵՄ

Օգնի՛ր ինձ. ես

ՎԱԽԵՆՈՒՄ ԵՄ

Հաղթահարել զգայմունքային պատերազմները
Աստծո խոսքի զորությամբ

ՋՈՅՍ ՄԱՅԵՐ

Ջոյս Մայեր
Օգնի՛ր ինձ. ես վախենում եմ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ծանոթություն 5

Մաս 1
Ազատագրում՝ վախից

1. Հակառակվի՛ր վախին 9
2. Աղոթե՛ք ամեն ինչի համար
   և մի՛ վախեցեք 23
3. Աղոթքի տեսակները 41
4. Թագավորության բանալիները 61

Ամփոփում 79

Մաս 2
Սուրբգրային խոսքեր

Սուրբգրային խոսքեր՝
վախը հաղթահարելու համար 83
Աղոթք՝ վախի դեմ պայքարելու համար..... 87
Աղոթք՝ Աստծո հետ անձնական
հաղորդակցման համար..... 89

Հեղինակի մասին.....91

ՇԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Մեզ համար, որպես Հիսուս Քրիստոսով հավատացյալների, շատ կարևոր է վախից ազատագրվելը, և դա շատ օգտակար է մեր հոգևոր ժառանգությունն ստանալու համար: Եթե նույնիսկ վախենում ենք, կարող ենք առաջ շարժվել և գործել, քանի որ Աստված մեզ հետ կլինի և կպաշտպանի: Նա մեզ կօգնի, կգնա մեր առջևից՝ պատերազմելու մեզ համար, ազատագրելու և հաղթանակ տալու, եթե հնազանդվենք Իրեն:

Եթե զգում եք, որ ձեր կյանքում բաց եք թողել որոշ առիթներ՝ վախի պատճառով, կարող եք սովորել, թե ինչպես հաղթել վախին և ապրել այն բարգավաճող կյանքը, որ Աստված ծրագրել է ձեզ համար:

Մաս 1

ԱՀԱՏԱԳՐՈՒՄ՝ ՎԱԽԻՃ

1

ՀԱԿԱՌԱԿՎԻ՛Ր ՎԱԽԻՆ

«.... քո Եհովա Աստված Ինքն է քեզ հետ գնում. Նա քեզ չի՛ թողնի և քեզ չի՛ ձգի»:

Երկրորդ Օրինաց 31.6

1

ՀԱԿԱՌԱԿՎԻ՛Ր ՎԱԽԻՆ

«Մի՛ վախեցիր, քանի որ Ես՝ Տերս, քեզ հետ եմ». ամբողջ Աստվածաշնչում այս պատգամը հանդիպում է տարբեր ձևերով: Աստված չի ցանկանում, որ վախենանք, քանի որ վախը մեզ արգելում է ընդունել և անել այն ամենը, ինչ Նա է ծրագրել մեզ համար: Նա սիրում է մեզ և ցանկանում է օրհնել, ուստի մեզ համար ապահովել է վախից ազատ լինելու բոլոր հնարավորությունները:

Այսպիսով, երբ հավատում ենք Հիսուս Քրիստոսին, չպետք է վախենանք այն ամենից, ինչից «աշխարհի մարդիկ»՝ անհավատներն են վախենում:

> «Սրա համար այսպես ասաց ինձ Տերը՝ Իր ձեռքի զորությամբ, և ինձ խրատեց՝ չգնալ այս ժողովրդի ճանապարհով՝ ասելով. «Մի՛ ասեք դաշնակցություն այն բոլոր բաներին, որին այս ժողովուրդն է ասում, և նրա վախով մի՛ վախեցեք և մի՛ զարհու-

> րեք: Զորաց Տիրոջը՝ Նրան սրբեք, և Նա լինի ձեր երկյուղը և ձեր զարհուրանքը»:
>
> Եսայի 8.11-13

Աստված Իր Խոսքում մեզ հայտնում է, որ կարող ենք լինել հաղթող և ուժեղ՝ մնալով Իր մեջ և գործելով Իր կարողության զորությամբ: Նա խոստացել է, որ մեզ երբեք չի լքի և չի թողնի՝ անկախ նրանից, թե ինչ է տեղի ունենում մեր շուրջը:

Մի՛ ՎԱԽԵՑԵՔ

Մեզնից յուրաքանչյուրին ծանոթ է այն եևույթը, երբ սկսում ես հավատքով առաջ քայլել, բայց հանկարծ՝ նույնիսկ դրա մասին մտածելուց վախ է առաջանում: Մենք պետք է գիտակցենք, որ վախի աղբյուրը սատանան է: Հովհաննեսի առաջին թղթի 4.18-ում ասվում է.

> «Վախ չկա սիրո մեջ, այլ՝ կատարյալ սերը հեռացնում է վախը, որովհետև վախը տանջանք ունի, բայց նա, ով վախենում է, կատարյալ չէ սիրո մեջ»:

Սատանան վախ է բերում, որպեսզի մեզ տանջի՝ դարձնելով ողորմելի և կասկածա-

միտ: Նա ցանկանում է մեզ արգելել, որպեսզի չանենք այն, ինչ Աստված ցանկանում է, որ անենք, և չընդունենք այն, ինչ Աստված ունի մեզ համար:

Մենք կարող ենք ապրել առանց որևէ վախի՝ կառուցելով մեր հավատքն այն խոսքերի վրա, որ գրված են Աստվածաշնչում: Օրինակ՝

> «Որովհետև Աստված չտվեց մեզ երկչոտության հոգի, այլ՝ զորության, սիրո և զգաստության (սիրո, զորության, հանգստության, կարգապահության, ինքնաղեկավարման և զգաստության Հոգի)»:
>
> Բ Տիմոթեոս 1.7

> «Ուժովացե՛ք և քա՛ջ եղեք, մի՛ վախեցե՛ք և նրանց երեսից մի՛ զարհուրեք, քանի որ Քո Եհովա Աստված Ի՛նքն է քեզ հետ գնում. Նա քեզ չի թողնի և չի ձգի»:
>
> Երկրորդ Օրինաց 31.6

Հռոմեացիներին ուղղված թղթի 10.17-ը մեզ հայտնում է. «Հավատքը լսելուց է, և լսելը՝ Աստծո Խոսքից»: Մենք պետք է սովորենք և բարձրաձայն դավանենք Սուրբ գրքի խոսքերը, ծարաված ժամանակ ջրի նման խմենք դրանք: Երբ բացենք մեր շուրթերը և

դավանենք այն, ինչ Աստված ասում է մեզ, Աստծո Խոսքը զորություն կտա՝ հաղթելու այն վախերը, որոնք մեզ տանջում և խանգարում են:

> «Եվ սա է այն համարձակությունը, որ ունենք Նրա հանդեպ, թե ինչ որ Նրա կամքի պես խնդրում ենք, լսում է մեզ: Եվ եթե գիտենք, թե լսում է մեզ ինչ որ խնդրում ենք, գիտենք, որ առնում ենք մեր խնդրանքները, որ խնդրեցինք Նրանից»:
>
> Ա Հովհաննես 5.14,15

Աղոթելու և Աստծո Խոսքը դավանելու մեջ զորություն կա, քանի որ հռչակում ենք Աստծո կամքը: Ես համոզված եմ, որ ամենակարևոր բաներից մեկը, որ մեր աղոթքի ժամանակ կարող ենք անել, Խոսքի դավանությունն է:

Երբ հայտնաբերում ենք, որ խուսափում ենք մեր կյանքի որոշ իրավիճակներին հակառակվելուց՝ վախի, սարսափի կամ զարհուրանքի պատճառով, պետք է աղոթենք և խնդրենք Աստծուն, որ կատարի այն, ինչ խոստացել է Իր Խոսքում: Գրված է, որ Աստված Ինքը մեր առջևից կգնա և ճանապարհ կհարթի մեզ համար (տե՛ս Երկր. Օր. 31.3):

Հակոբոս առաքյալն ասում է, որ չունենք, որովհետև չենք խնդրում (տե՛ս Հակոբ. 4.2): Հիսուսը հորդորում է, որ խնդրենք, փնտրենք և թակենք (տե՛ս Մատթ. 7.7): Օրինակ՝ երբ գնում ենք աշխատանքի ընդունելության հարցազրույցի, վատ տպավորություն ստեղծելուց կամ մերժվելուց վախենալու փոխարեն պետք է խնդրենք Աստծուն՝ ճանապարհ պատրաստի մեզ համար, որպեսզի մեր անձերը կարողանանք ճիշտ կերպով ներկայացնել: Այնուհետև պետք է վստահենք, որ ամեն ինչ կլինի այնպես, ինչպես հարկն է՝ ըստ Աստծո կատարյալ կամքի և ծրագրի:

ԿՍՏՍՐԵ՛Ք ԴՍ ՎԱԽԵՆԱԼՈՎ

> «Եվ Եհովան ասաց Աբրամին. «Գնա՛ քո երկրից և քո ազգականներից և քո հոր տնից այն երկիրը, որ ես քեզ ցույց կտամ»:
>
> Ծննդոց 12.1

Ի՞նչ կզգայիք, եթե Աստված ձեզ ասեր, որ թողնեք ձեր տունը, ընտանիքը և այն ամենը, ինչ հարազատ ու հարմարավետ է ձեզ համար, և ուղևորվեք՝ Աստված գիտի, թե ուր: Կվախենայի՞ք:

Աբրամը հենց այսպիսի խոսք ստացավ, և դա վախեցրեց նրան: Ահա թե ինչու էր Աստված նրան շարունակաբար ասում՝ մի՛ վախեցիր:

Աստված միևնույն պատգամը տվեց նաև Հեսուին, երբ նրան կանչեց՝ առաջնորդելու Իսրայելի որդիներին դեպի այն երկիրը, որ խոստացել էր նրանց որպես ժառանգություն (տե՛ս Հեսու 1.6,7,9):

Յուրաքանչյուր ոք, ով կանչված է Աստծո համար ինչ-որ բան անելու, պետք է շարունակաբար լսի, որ Աստված ասում է. «Մի՛ վախեցիր»:

Էլիզաբեթ Էլիոտը, ում ամուսինը Էկվադորում սպանվեց չորս այլ միսիոներների հետ, պատմում է, որ իր կյանքն ամբողջությամբ ղեկավարվում էր վախով: Ամեն անգամ, երբ նա փորձում էր ծառայության մեջ քայլ անել, վախը կանգնեցնում էր: Բարեկամներից մեկը նրան մի խորհուրդ տվեց, որը փոխեց իրավիճակը՝ նրան ազատագրելով վախից: Նա ասաց. «Ինչո՞ւ դա չես անում վախենալով»: Էլիզաբեթ Էլիոտը և Ռաքել Սենթը՝ սպանված միսիոներներից մեկի քույրը, միասին շարունակեցին ավետարանել հնդկական ցեղերին՝ ներառյալ այն մարդկանց,

ովքեր սպանել էին իրենց հարազատներին՝ ամուսնուն և եղբորը:

Շատ անգամ կարծում ենք, թե պետք է սպասել և ոչինչ չանել, մինչև զգանք, որ չենք վախենում: Եթե այդպես վարվենք, հնարավոր է, շատ քիչ բան կանենք Աստծո, մարդկանց և նույնիսկ՝ մեզ համար: Թե՛ Աբրահամը, թե՛ Հեսուն պետք է քայլեին հավատքով և հնազանդվեին Աստծուն՝ անելով այն, ինչ Նա էր պատվիրել: Նրանք դա պետք է անեին նույնիսկ՝ վախենալով:

Աստված ինձ հիշեցրեց Էլիզաբեթ Էլիոտի պատմությունը՝ ուշադրությունս հրավիրելով «Ինչո՞ւ դա չես անում վախենալով» խոսքերի վրա, այնուհետև ցույց տվեց վախի հետ կապված որոշ բաներ:

«Մի՛ վախեցեք»՝ նշանակում է «Մի՛ փախցեք»

> «...Մի՛ վախեցեք, կանգնե՛ք և տեսե՛ք Եհովայի փրկությունը, որ այսօր կանի ձեզ համար...»:
>
> Ելից 14.13

Այն, ինչ ես փորձում էի հասկանալ, Աստված հայտնեց ինձ հետևյալ արտահայտությամբ. «Մի՛ վախեցիր», որը պարզապես նշա-

նակում է՝ «Մի՛ փախչիր»: Երբ կանգնած ենք վախի դեմ, ոչ թե մեր ծնկները պետք է խոնարհվեն, այլ պետք է հաստատուն կանգնենք և անենք այն, ինչից վախենում ենք:

Նույնիսկ եթե մեր ծնկները դողում են, բերանը՝ չորանում, և թվում է, թե ընկնում ենք, պետք է շարունակաբար ասենք. «Տե՛ր, զորացրո՛ւ ինձ: Դու Ինքդ ես ասել, որ սա անեմ, և Քո օգնությամբ ես կանեմ: Ես որոշել եմ, որ իմ կյանքը ղեկավարվելու է ոչ թե վախով, այլ Քո Խոսքով»:

ՀԱԿԱՌԱԿՎԵ՛Ք ՎԱԽԻՆ ԱՍՏՈ ԽՈՍՔՈՎ

Վախին չի կարելի տեղ տալ և վստահել. մենք պետք է հակառակվենք և պայքարենք դրա դեմ Աստծո Խոսքով: Լինում են ժամանակներ, երբ մարդիկ գերբնականորեն ազատագրվում են վախից՝ աղոթքի միջոցով: Դրանում որևէ կասկած չկա, քանի որ մենք ծառայում ենք հրաշագործ Աստծուն: Ինքս էլ աղոթել եմ տարբեր մարդկանց համար, որ ազատագրվեն վախից, որից հետո նրանք վերադարձել են ինձ մոտ և ասել. «Ձեր աղոթքից հետո վախի հետ կապված որևէ խնդիր չեմ ունեցել»: Սակայն, մեծ մասամբ, մեր վա-

խերին դիմադրում և հաղթում ենք՝ խորհրդածելով, Աստծո Խոսքը խոսելով, ինչպես նաև Սուրբ Հոգու զորությամբ հակառակվելով:

Իմ անձնական կյանքում մեծ խնդիրներ ունեի, բռնության ենթարկվելու պատճառով տանջվում էի դեռևս շատ վաղ տարիներից: Կային շատ բաներ, որոնցից պետք է ազատագրվեի: Եվ Աստված ինձ ազատագրեց այդ ամենից՝ Իր Խոսքը կիրառելու արդյունքում: Աստված միշտ չէ, որ ազատագրում է այդպիսի «բաներից», հաճախ Նա քայլեցնում է մեզ դրանց «միջով»:

ՎԱԽԸ ՍՈՒՏ Է

> «Դուք ձեր սատանա հորից եք և կամենում եք ձեր հոր ցանկություններն անել: Նա սկզբից էլ մարդասպան էր և ճշմարտության մեջ չմնաց, որովհետև ճշմարտություն չկա նրանում: Երբ որ սուտ է խոսում, իրեններից է խոսում, որովհետև ստախոս է և ստության հայր»:
>
> Հովհաննես 8.44

Աստվածաշունչը ոչ թե ասում է. «Մի՛ դողացեք», «Մի՛ ցնցվեք», «Տագնապի մեջ մի՛

ընկեք», այլ ասում է. «Մի՛ վախեցեք»: Տարբերություն կա: Այս արտահայտությամբ մեզ ասվում է՝ չպետք է փախչել կամ փախուստի դիմել: Էլիզաբեթ Էլիոտի բարեկամը խորհուրդ էր տալիս նրան, որ փախչելու փոխարեն սկսի անել այն, ինչից վախենում էր:

Ասում են, որ Վ-Ա-Խ բառի տառերը (անգլերենում) նշանակում են հետևյալը. «Սխալ փաստարկը հայտնվում է որպես ճիշտ»:

Հիսուսն ասում էր, որ սատանան ստախոս է և ստության հայրը: Ճշմարտություն չկա նրա մեջ: Նա փորձում է օգտագործել սուտը՝ Աստծո ժողովրդին վախով մոլորեցնելու համար, որպեսզի նրանք համարձակություն չունենան հնազանդվելու Աստծուն և հնձելու այն օրհնությունները, որ Նա պատրաստել է նրանց համար:

Շատ անգամ ինչ-որ բանի պատճառով ունեցած վախն ավելի վտանգավոր է, քան տվյալ պատճառը: Սովորաբար, եթե բավարար կերպով քաջալերեն մեզ, և որոշենք անել այն, ինչից վախենում ենք, կհայտնաբերենք, որ դա այնքան էլ վտանգավոր չէ, որքան կարծում էինք:

Ամբողջ Աստվածաշնչում տեսնում ենք, որ Աստված միշտ Իր ժողովրդին ասում է.

«Մի՛ վախեցեք»: Ես հավատում եմ, որ Նա այսպես էր վարվում, որպեսզի քաջալերեր նրանց, և նրանք սատանային թույլ չտային հափշտակելու իրենց օրհնությունը:

Նա գիտի, որ մենք վախկոտ ենք, և շարունակում է քաջալերել ու հորդորել մեզ, որպեսզի հաղթահարենք մեր առջև կանգնած բոլոր ստեհո, և անենք այն, ինչ Նա է ասում: Ինչո՞ւ: Որովհետև Նա գիտի, որ ճանապարհի մյուս կողմում մեզ մեծ օրհնություններ են սպասվում: Աբրահամի կյանքը լավ օրինակ է մեզ համար:

Համբերատակությունն ու հանձնառությունը մեծ վարձատրություն ունեն

> «Այս բաներից հետո տեսիլքում Եհովայի խոսքն Աբրամին եղավ՝ ասելով. «Մի՛ վախեցիր, Աբրա՛մ, Ես քեզ համար վահան եմ, քո վարձքը խի՛ստ շատ է»:
>
> Ծննդոց 15.1

Ինչպես տեսանք Ծննդոց 12.1-ում, Աստված Աբրահամին մեծ պատվեր տվեց:

Նա ասաց. «Գնա՛ քո երկրից, քո ազգականներից և քո հոր տնից այն երկիրը, որ Ես

քեզ ցույց կտամ»: Այսինքն՝ վե՛ր կաց, հրաժե՛շտ տուր նրանց, ում ճանաչում ես, թո՛ղ այն ամենը, ինչ հարմարավետ է քեզ համար, և գնա՛ այնտեղ, որտեղ Ես քեզ ցույց կտամ:

Եթե Աբրահամը ծնկները խոնարհեր վախի առջև, Աստծուց ստացած խոսքերի շարունակությունը երբեք չէր իրագործվի: Նա երբեք չէր ճանաչի Աստծուն՝ որպես վահանի, երբեք չէր ընդունի իր մեծ վարձքը և հատուցումը:

Միևնույն ձևով, եթե Հեսուն չհաղթահարեր իր վախը և չինազանդվեր Աստծո պատվիրանին՝ իր ժողովրդին Խոստացված երկիր առաջնորդելու համար, ո՛չ նա, և ո՛չ էլ Աստծո ժողովուրդը չէին օգտվի այն ամենից, ինչ Աստված ծրագրել և նախապատրաստել էր նրանց համար:

Աստծո Խոսքի մեջ զորություն կա՝ մեզ սպառազինելու, որ դադարենք մեր ծնկները խոնարհելուց վախի՝ սատանայի ցանկությունների առջև: Մենք կարող ենք անել այն, ինչ Աստված է ցանկանում, նույնիսկ եթե վախենում ենք:

2

ԱՂՈԹԵ՛Ք ԱՄԵՆ ԻՆՉԻ ՀԱՄԱՐ ԵՎ ՄԻ՛ ՎԱԽԵՑԵՔ

«... շատ զորավոր է արդարի աղոթքը ներգործելով»։

Հակոբոս 5.16

2

Աղոթե՛ք ամեն ինչի համար և մի՛ վախեցեք

Որոշ ժամանակ առաջ Աստված խոսեց ինձ հետ. «Աղոթի՛ր ամեն ինչի համար և մի՛ վախեցիր»: Նա այս խոսքերն ասաց, երբ գնում էի մի նոր վարսահարդարի մոտ, ով այնքան էլ հմուտ չէր իր գործում: Տեսնելով իմ անհանգստությունը՝ Սուրբ Հոգին խոսեց ինձ հետ. «Մի՛ վախեցիր, այլ աղոթի՛ր, որ Աստված օծի այդ կնոջը, որպեսզի նա կարողանա անել այն, ինչ պետք է անել»:

Հաջորդ երկու շաբաթների ընթացքում Նա շարունակում էր տարբեր բաներ սովորեցնել աղոթքի վերաբերյալ՝ ընդդեմ վախի: Դրանցից շատերն առնչվում էին կյանքի փոքր հարցերում մեր ունեցած վախերին: Նա ցույց տվեց, որ յուրաքանչյուր իրավիճակում՝ մեծ, թե փոքր, կարևոր, թե աննշան, լուծումը գտնվում է աղոթքի մեջ:

«Մի՛ վախեցիր, որովհետև Ես քեզ հետ եմ, մի՛ վեհերիր, որովհետև Ես քո Աստվածն եմ: Ես զորացրել եմ քեզ, նաև օգնել եմ քեզ, նաև հաստատել եմ Իմ արդարության աջով... Որովհետև Ես՝ Եհովան՝ Քո Աստվածը, զորացնում եմ քո աջը, որ ասում եմ քեզ՝ մի՛ վախեցիր, Ես կօգնեմ քեզ»:

Եսայի 41.10,13

Այս խոսքում Աստված Իր ժողովրդին ասում է, որ վախեցած կամ վհատված չնայեն իրենց շուրջը, քանի որ Նա իրենց Աստվածն է: Երբեմն մենք վախենում ենք ուղղակի մեր իրավիճակներին նայելուց: Սա սխալ է: Որքան շատ ենք կենտրոնացնում մեր աչքերն ու շուրթերը խնդիրների վրա, այնքան շատ ենք վախենում: Դրա փոխարեն պետք է կենտրոնացնենք մեր աչքերն ու շուրթերը Աստծո վրա: Նա կարող է մեկնաբանել ցանկացած խնդիր, որին երբևիցե կհանդիպենք այս կյանքում:

Աստված մեզ խոստացել է զորացնել և օգնել դժվարությունների ժամանակ, բարձրացնել ու հաստատել Իր արդարության աջով: Նա մեզ պատվիրում է չվախենալ: Բայց հիշե՛ք՝ Նա չի ասում, որ երբեք վախ չզգանք, այլ՝ թույլ չտանք, որ այդ զգացումը ղեկավարի մեզ:

Աստված անհատապես յուրաքանչյուրիս ասում է. «Մի՛ վախեցիր, Ես կօգնեմ քեզ»: Բայց մենք երբեք չենք տեսնի Աստծո օգնությունը, մինչև ամեն ինչ չդնենք իր տեղում և չինազանդվենք հավատքով քայլելու:

Գիտե՞ք, թե երբ գործնականում զգացի Աստծո քարոզչության օծությունը: Այն ժամանակ, երբ բարձրացա բեմ և սկսեցի խոսել. ոչ թե սկզբից, այլ այն ժամանակ, երբ քայլ արեցի:

Աստված այսօր մեզ ասում է. «Թույլ մի՛ տվեք, որ վախը ղեկավարի ձեր կյանքը: Սկսեք անել այն, ինչ Ես եմ ասում ձեզ, քանի որ դա միայն ձեր օգտի համար է: Ես գիտեմ, որ օրհնությունները գտնվում են մյուս կողմում, սատանան էլ գիտի: Ահա թե ինչու է նա դուրս գալիս ձեր դեմ՝ իր վախով: Դրա համար Ես շարունակաբար ասում եմ ձեզ՝ մի՛ վախեցեք»:

Մի՛ ՎԱԽԵՑԻՐ, ՈՐՈՎՀԵՏև ԴՈՒ ԻՄՆ ԵՍ

«Եվ հիմա այսպես է ասում Տերը՝ քո Ստեղծողը, ո՛վ Հակոբ, և քո Արարիչը, ո՛վ Իսրայել. մի՛ վախեցիր, որովհետև Ես քեզ փրկել եմ, քո անունով կանչել եմ, թե դու

> Իմն ես: Երբ որ ջրերից անցնես, Ես քեզ հետ եմ, և եթե գետերով՝ դրանք քեզ չեն ողողի, երբ որ գնաս կրակի միջով, չես այրվի, և բոցը քեզ չպիտի վառի»:
>
> Եսայի 43.1,2

Այս խոսքում Աստված մեզ ասում է, որ չվախենանք, երբ անցնենք տարբեր փորձությունների միջով: Սա նշանակում է, որ մենք իրականում հաղթանակներ կտեսնենք մեր կյանքում, բայց պե՛տք է անցնենք փորձությունների միջով: Աստված խոստացել է լինել մեզ հետ և պահպանել. երբ որ անցնենք ջրերով, դրանք չեն ողողի մեզ, և եթե անցնենք կրակի միջով, բոցը չի այրի կամ չի ոչնչացնի մեզ:

Դուք հիշո՞ւմ եք երեք եբրայեցի տղաների՝ Սեդրակի, Միսակի և Աբեդնագովի պատմությունը: Նրանց գցեցին կրակի հնոցի մեջ, բայց նրանք դուրս եկան անվնաս, նույնիսկ ծխի հոտ չէր գալիս նրանցից (տե՛ս Դանիել 3.1-30):

Կան մեծ վախեր, ինչպես օրինակ՝ կրակի հնոցի կամ այլ փորձությունների մեջ հայտնվելու վախը: Կան նաև փոքր վախեր, օրինակ՝ մենք վախենում ենք, որ մեր մազը կարող է ծուռ երևալ:

Մենք կարող ենք վախենալ թե՛ ինչ-որ մեծ բանից, օրինակ՝ քաղցկեղից, սրտի հիվան-

դությունից, սիրելի էակի մահից, թե՛ փոքր բաներից՝ բացօթյա խնջույքի ժամանակ անձրև սկսվելուց կամ ավտոմեքենաների կանգառը չգտնելուց: Սակայն ինչ մեծություն կամ պատճառ էլ, որ ունենա վախը, միևնույն է, դրա դեմ պետք է պայքարել: Ինչպես տեսանք, վախին պետք է հակառակվել աղոթքով և Աստծո Խոսքով: Երբ աղոթում ենք, պետք է նաև հավատանք: Վախը մեր թշնամին է, և հենց այդ տեսանկյունից էլ պետք է պայքարենք դրա դեմ:

ՀԱՎԱՏՔԸ՝ ՈՐՊԵՍ ՎԱԽԻ ՀԱԿԱԹՈՒՅՆ

«Բայց եթե ձեզնից մեկը իմաստության պակասություն ունի, թո՛ղ խնդրի Աստծուց, որ բոլորին տալիս է առատությամբ և չի նախատում, և կտրվի նրան: Միայն թե՝ թո՛ղ հավատքով խնդրի՝ առանց երկմտելու, որովհետև երկմտողը նման է ծովի հողմակոծված և տատանված ալիքին»:

Հակոբոս 1.5-7

Հավատքը՝ վախի միակ հակաթույնն է:

Եթե թույն խմենք, պետք է հակաթույն ընդունենք, այլապես թույնը լուրջ վտանգի, մինչև իսկ մահվան պատճառ կդառնա: Այս

նույնը վերաբերում է վախի մահացու թույնին: Եթե վախենում ենք, պետք է հակաթույն ընդունենք, և վախի միակ հակաթույնը հավատքն է:

Երբ վախը թակում է մեր դուռը, պետք է պատասխանենք հավատքով, քանի որ ուրիշ ոչ մի բան չի կարող արդյունավետ լինել վախի դեմ: Աղոթքը հիմնական հաղորդիչն է, որ մեզ հավատք է հաղորդում: Հավատքը պետք է առնչվի տվյալ խնդրին և արտահայտվի որոշակի ձևով: Հնարավոր է աղոթել՝ առանց հավատքի (մենք դա հաճախ ենք անում), բայց անհնար է ունենալ իրական հավատք և չաղոթել:

Հակոբոսն ասում է, որ երբ ինչ-որ բանի կարիք ենք զգում, պետք է աղոթենք և խնդրենք Աստծուց՝ հավատալով մեր աղոթքին: Հավատքով խնդրելը շատ կարևոր է: Մենք պետք է հավատանք, որ այն, ինչ խնդրում ենք Աստծուց, կստանանք՝ ըստ Իր աստվածային կամքի և ծրագրի:

Այսպիսով, վախին հաղթելու ճանապարհը պարզ է՝ հաստատուն հավատք և շարունակական աղոթք:

Աղոթե՛ք ամեն ժամանակ

«Ամեն աղոթքով և աղաչանքով աղոթք արեք ամեն ժամանակ Հոգով և սրանում հսկեք ամբողջ հարատևությամբ և աղաչանքով բոլոր սուրբերի համար»:

Եփեսացիների 6.18

Եփեսացիներին ուղղված թղթի 6.10-18 խոսքերում Պողոս առաքյալը խոսում է Աստծո սպառազինության մասին: Նա ասում է, որ Աստծո Խոսքը զենք է, որը պետք է ներգրավել հոգևոր պատերազմի մեջ: Պողոսն ամփոփում է իր պատգամը՝ հորդորելով ամեն ժամանակ աղոթք անել Հոգով:

Ի՞նչ հաճախականությամբ պետք է աղոթենք. ամե՛ն ժամանակ:

Ինչպե՞ս պետք է աղոթենք. Հոգո՛վ, ամեն աղոթքով:

Հաջորդ գլխում կքննարկենք աղոթքի տարբեր տեսակները, բայց այժմ քննենք, թե ինչ է նշանակում «ամեն ժամանակ» աղոթել: Արդյո՞ք դա նշանակում է, որ երբ նպարեղենի խանութում Աստված աղոթք է դնում մեր սրտում, հենց այնտեղ՝ խանութի մեջ, պետք է ծնկի իջնենք և աղոթենք:

Ես հաճախակի եմ ծնկի իջնում անկողնուս կողքին և աղոթում: Լինում են ժամանակներ, երբ Աստծուց առաջնորդվում եմ՝ Իր առջև գլուխս խոնարհելու և աղոթելու: Պետք է ուշադիր լինել և աղոթքի դիրքը չշփոթել աղոթքի հետ: Մենք կարող ենք լռությամբ աղոթել, երբ շրջում ենք խանութում կամ հասարակական այլ վայրում:

Կյանքի տարբեր ժամանակահատվածներում կարող ենք աղոթել տարբեր ձևերով: Օրինակ՝ երեք կամ չորս փոքրիկ երեխաներ ունեցող երիտասարդ մոր աղոթքի կյանքը պետք է տարբերվի այն տատիկի աղոթքի կյանքից, ում ընտանիքում բոլորը մեծացել են և գտնվում են տնից դուրս:

Եթե մենք «կրոնավոր» դառնանք աղոթքի հարցում՝ մտածելով, որ պետք է այսպես կամ այնպես աղոթել, քանի որ ինչ-որ մեկն այդպես է աղոթում, մեր անձերի վրա դատապարտություն կբերենք: Աղոթքի մեջ կարևորը ոչ թե դիրքն է, ժամանակը կամ վայրը, այլ ամեն ժամանակ, անդադար հավատքով աղոթել սովորելը: Ամեն անգամ, երբ ցանկություն կամ կարիք է առաջանում… ԱՂՈԹԵՔ:

Աղոթե՛ք սուսնչ դադարի

«Անդադար աղոթք արե՛ք»:

Ա Թեսաղոնիկեցիների 5.17

Մի ժամանակ կարդում էի այս խոսքերը և զարմանում: «Տեր, ինչպե՞ս կարող եմ երբևիցե հասնել այն մակարդակին, որ աղոթեմ՝ առանց դադարի»: Ինձ համար «առանց դադարի» արտահայտությունը նշանակում էր առանց ընդմիջման, առանց հանգստի:

Ես չէի կարողանում հասկանալ, թե ինչպես է դա հնարավոր:

Այժմ ավելի լավ եմ հասկանում, թե ինչ էր ասում Պողոսը: Նա նկատի ուներ, որ աղոթքը պետք է լինի շնչառության պես մի բան, որ անում ենք միշտ, նույնիսկ դրա մասին չմտածելով: Մեր ֆիզիկական մարմիններն ունեն շնչառության կարիք: Մենք ապրում ենք շնչելու և արտաշնչելու միջոցով: Միևնույն ձևով՝ մեր հոգևոր մարմիններն ունեն աղոթքի կարիք, որպեսզի հաստատվեն և աճեն դրա միջոցով: Խնդիրն այն է, որ կրոնավոր մտածողության պատճառով սխալ պատկերացում ենք ձեռք բերում աղոթքի մասին: Մտածում ենք, որ եթե ծրագրով չենք

աղոթում, կորցնում ենք մեր «գնահատակա-նը»: Մենք դարձել ենք չափազանց ճշտա-պահ աղոթքի հարցում: Աստված ինձ մի օրինակ տվեց՝ սովորեցնելու համար, թե ինչ-պես պետք է աղոթել: Ինչպես որ շնչում ենք ամբողջ օրը, բայց երբեք չենք հաշվում, թե որքան ենք շնչել, ճիշտ այդպես էլ պետք է աղոթենք ամբողջ օրը՝ առանց հաշվելու մեր աղոթքները:

Ես երբեք ժամացույց չեմ կրել՝ ինձ հիշեց-նելու համար, որ պետք է շնչեմ ամեն վայրկ-յան: Գիշերը, երբ աշխատանից տուն եմ գա-լիս, երբեք չեմ գրառում, թե որքան եմ շնչել այդ օրը: Ես ուղղակի շնչում եմ, քանի որ կարիք ունեմ շարունակաբար և անդադար շնչելու՝ առանց դրա մասին մտածելու:

Ահա թե ինչպես պետք է մոտենանք մեր աղոթքներին:

Ես չգիտեմ, թե օրական որքան եմ աղո-թում: Աղոթում եմ ամբողջ օրը: Սկսում եմ աղոթել, երբ առավոտյան արթնանում եմ, և աղոթում եմ, մինչև որ գիշերը քնում եմ: Ես բավականություն եմ ստանում թե՛ առանձ-նացված աղոթքների ժամերից, թե՛ ամբողջ օրվա ընթացքում արած աղոթքներից:

Արդյո՞ք սա նշանակում է, որ ես այլևս ոչինչ չեմ անում: Ո՛չ, կան ժամեր, երբ պետք է նվիրվեմ այլ գործերի: Կարծում եմ, որ երբ սկսենք քննարկել աղոթքի տարբեր տեսակները, կտեսնենք, որ կարող ենք աղոթել ամեն ժամանակ, ամեն իրավիճակում, ամեն տեղ, և Աստված լսում է այսպիսի աղոթքները, որոնք այնքան զորավոր ու հոգևոր են, որքան ցանկացած աղոթք:

Գիտե՞ք, թե ինչու է սատանան ցանկանում, որ վատ զգանք մեր աղոթքի կյանքից: Որովհետև եթե մտածենք, որ ճիշտ չենք աղոթում, կսկսենք աղոթել պարտականությունից դրդված, առանց հավատքի, հետևաբար դա մեզ որևէ լավ բանի չի տանի:

Աղոթքի սկզբունքները

«Պետրոսն ու Հովհաննեսը միասին գնում էին տաճար՝ իններորդ ժամի աղոթքին»:

Գործք 3.1

Շատ մարդիկ հանցավորության զգացում ունեն իրենց աղոթքի կյանքի պատճառով: Սակայն դրա կարիքը չկա, քանի որ յուրաքանչյուր անհատ պետք է ունենա իր անձնա-

կան աղոթքի կյանքը, որը չպետք է նման լինի մեկ ուրիշի աղոթքի կյանքին:

Այո՛, կան աղոթքի զանազան սկզբունքներ, որոնց պետք է հետևել: Օրինակ՝ հրաշալի է կրթել մեր անձերը՝ որոշակի աղոթքի ժամ և տեղ ունենալու: Նույնիսկ Նոր կտակարանում, ինչպես տեսանք Գործք առաքելոցում, աշակերտներն առանձնացնում էին օրվա որոշակի ժամեր և գնում էին նշանակված վայր՝ աղոթելու: Հրաշալի է ինքնակրթումը, և որևէ սխալ բան չկա դրանում: Բայց դա պետք է լինի մեր աղոթքի կյանքի սկիզբը և ոչ թե վերջը:

Փաստն այն է, որ մենք պետք է կրթենք մեր անձերը՝ աղոթքի կյանքում կարգ ու կանոն հաստատելու համար: Մենք պետք է ունենանք աղոթքի ծրագիր, որն անհատապես հարմարեցված է մեզ, այնուհետև պետք է հետևենք դրան, մինչև որ դա կդառնա մեր ապրելակերպը:

Կար ժամանակ, երբ պետք է կրթեի իմ անձը՝ ատամներս խոզանակով լվանալու: Բայց այժմ դա անում եմ՝ առանց մտածելու: Ատամ լվանալն ուղղակի իմ ամենօրյա կյանքի անբաժանելի մասն է: Ես դա անում

եմ առավոտյան, երբ արթնանում եմ, այնուհետև ամեն ճաշից հետո: Նույնը վերաբերում է Աստծո հետ քայլելուն: Սկզբում պետք է կրթենք մեր անձերն այն ոլորտներում, որտեղ շատ անկիրթ ենք: Բայց հետո դա պետք է դառնա մեր ապրելակերպը:

Ես հավատում եմ, որ եթե թույլ տանք, Սուրբ Հոգին մեզ կառաջնորդի անդադար աղոթքի, որը շնչառության պես կդառնա մեզ համար: Այդ ժամանակ կարող ենք շարունակաբար աղոթքի ընծա մատուցել Աստծուն: Մենք կարող ենք ամեն օր արթնանալ՝ ասելով. «Բարի լո՛յս, Տե՛ր, ես սիրո՛ւմ եմ Քեզ»: Կարող ենք մոտենալ նախաճաշի սեղանին և ասել. «Հա՛յր, Դու բարի ես ինձ համար»: Կարող ենք մեքենան վարել դեպի աշխատավայր՝ ասելով. «Շնորհակա՛լ եմ, Տե՛ր, այն բոլոր բարի գործերի համար, որ այսօր անելու ես»:

Ամբողջ օրվա ընթացքում և երեկոյան կարող ենք շարունակել հաղորդակցվել Աստծո հետ՝ փառաբանելով, երկրպագելով, շնորհակալություն հայտնելով Նրան՝ Իր ներկայության համար: Մենք կարող ենք խնդրել Նրա օգնությունը մեր յուրաքանչյուր խնդրի մեջ: Գիշերը՝ նախքան քնելը, կարող ենք

մատուցել մեր երախտագիտության աղոթքը՝ օրվա օրհնությունների համար, և խնդրել խաղաղ ու թարմացուցիչ գիշերային քուն: Սատանան կփորձի ասել, որ դա աղոթք չէ, քանի որ մեր դիրքը ճիշտ չէ, կամ էլ չենք աղոթում «եկեղեցական լեզվով»: Ահա այդ ժամանակ է, որ պետք է նրան հակառակվենք, քանի որ աղոթքը մարմնով և նույնիսկ բերանով չէ, այլ՝ հոգով, մտքով և սրտով: Եվ որտեղ աղոթք կա, այնտեղ զորություն կա:

Աղոթքը՝ զորություն է

«...շատ զորավոր է արդարի աղոթքը՝ ներգործելով»:

Հակոբոս 5.16

Պարզ հավատքով արված աղոթքը զորավոր է: Իրականում, չկա ավելի զորավոր բան, քան անկեղծ, շարունակական աղոթքն է: Սատանան մեզ տանջում է մեր աղոթքի կյանքի պատճառով և փորձում է արգելել, որ հավատարիմ լինենք այդ ոլորտում, որովհետև ցանկանում է, որ մենք տկար վիճակում լինենք: Նա գիտի, որ շարունակական, հավատքով արված աղոթքը կործանում է իր

գործերը և մեզ առաջնորդում Աստծո կամքի համաձայն:

Ամեն անգամ, երբ մեզ հանցավոր ենք զգում մեր աղոթքի կյանքի հանդեպ, կորցնում ենք աղոթքի միջոցով մեր հավատքն արտահայտելու կարողությունը:

Որպեսզի այս կյանքում իրագործենք այն, ինչի համար Աստված մեզ կանչել է, պետք է վստահ լինենք, որ Նա իսկապես լսում է մեր աղոթքները և պատասխանում: Ահա թե ինչն է մեր աղոթքները դարձնում զորավոր և արդյունավետ:

Ահա թե ինչու մենք չպետք է վախենանք, այլ պետք է շարունակաբար աղոթենք՝ հավատքով և ամեն տեսակի աղոթքներով:

3

ԱՂՈԹՔԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

«Արդ, աղաչում եմ՝ ամենից առաջ աղոթք անել՝ խնդրվածք, աղաչանք, գոհություն բոլոր մարդկանց համար»:

Ա Տիմոթեոս 2.1

3

Աղոթքի տեսակները

«Արդ, աղաչում եմ՝ ամենից առաջ աղոթք անել՝ խնդրվածք, աղաչանք, գոհություն բոլոր մարդկանց համար: Թագավորների և բոլոր իշխանավորների համար, որ խաղաղ և հանդարտ կյանք վարենք ամբողջ աստվածապաշտությունով և սրբությունով, որովհետև սա բարի և ընդունելի է մեր Փրկիչ Աստծո առջև»:

Ա Տիմոթեոս 2.1

Ինչպես տեսնում ենք այս խոսքում, մենք պետք է աղոթենք տարբեր տեսակի աղոթքներով՝ մեր անձերի և ուրիշների համար: Ուշադրություն դարձնենք աղոթքի տարբեր տեսակներին, երբ ներգրավվում ենք շարունակական, անկեղծ աղոթքի մեջ:

Հանձնման աղոթք

«Տիրո՛ջը հանձնիր քո ճանապարհը և Նրա՛ն հուսա, և Նա կկատարի»:

Սաղմոս 37.5

Կա աղոթք, որով մեր անձերը կամ կյանքը հանձնում ենք Աստծուն: Մենք այս աղոթքով աղոթում ենք այն ժամանակ, երբ պետք է մեր բոլոր հոգսերը գցենք Նրա վրա՝ ինչպես ասվում է Պետրոսի առաջին թղթի 5.7-ում. «Ձեր բոլոր հոգսերը Նրա վրա գցե՛ք, որովհետև Նա հոգս է անում ձեզ համար»: Երբ հանդիպում ենք խնդիրների և վախի, որոնք փորձում են մեզ կոտրել և կործանել, պետք է աղոթենք. «Տե՛ր, ես չեմ կրի այս հոգսերի ծանրությունն ինձ վրա և թույլ չեմ տա, որ դա ինձ տանջի և արգելի Քեզ ծառայել: Ես աղոթում եմ, Հա՛յր, որ Դու ինձ զորացնես և իրավունք տաս՝ անելու այն, ինչի համար ինձ կանչել ես, նույնիսկ եթե դա պետք է անեմ վախենալով»:

«Տե՛ր, այս իրավիճակը հանձնում եմ Քեզ: Այսուհետև սատանան ինչ էլ փորձի անել՝ չար, վտանգավոր կամ մոլորեցնող, դա իմ խնդի-

ը չէ, այլ՝ Քոնը. ես անելու եմ այն, ինչ Դու ես ասում, իսկ մնացածը թողնում եմ Քեզ»:

Հենց որ վախ է առաջանում, պետք է աղոթենք, և վաղ թե ուշ կտեսնենք, որ վախը պարտված է Աստծո զորությամբ: Խնդիրն այն է, որ շատ անգամներ մեծ վախերը չեն, որ պատճառ են հադիսանում մեծ վտանգի: Հաճախ փոքրիկ, ձանձրալի վախերն են, որ գիշեր ու ցերեկ հարձակվում են մեզ վրա, որպեսզի ամայացնեն մեր կյանքը և գողանան մեր ուրախությունը: Դրանք նման են «փոքրիկ աղվեսների, որոնք ավերում են այգիները» (Երգ երգոց 2.15):

Ահա թե ինչու վախի առաջին իսկ նշանի դեպքում, կարևոր չէ՝ մեծ թե փոքր, պետք է հակառակվենք և աղոթենք. «Տեր, ես չեմ ապրի վախի մեջ: Դրա փոխարեն՝ իմ ճանապարհը հանձնում եմ Քեզ: Խնդրում եմ, հաղթանակ տուր այս իրավիճակում, որը փորձում է ինձ տանջել և արգելել, որ ապրեմ այն բարգավաճ կյանքը, որ Դու ես նախատեսել ինձ համար, և իրագործել այն բարի ու կատարյալ կամքը, որ ունես իմ կյանքի համար»:

Եթե անկեղծորեն ու լրջորեն աղոթենք, Աստված կհարգի մեր խնդրանքը և կանի Իր բաժինը՝ մեզ ազատելու համար:

ՆՎԻՐՄԱՆ ԿԱՄ ԸՆԾԱՅՄԱՆ ԱՂՈԹՔ

«Արդ, աղաչում եմ ձեզ, եղբայրներ, Աստծո ողորմությունով, որ ձեր մարմինները ներկայացնեք կենդանի, սուրբ և Աստծո ընդունելի պատարագ, որն է ձեր բանավոր պաշտոնը»:

Հռոմեացիների 12.1

Երբ ինչ-որ բան ենք նվիրում Աստծուն աղոթքով, դա կոչվում է նվիրման կամ ընծայման աղոթք: Մենք ասում ենք. «Տե՛ր, ես Քեզ եմ տալիս իմ գումարը, ժամանակը, միտքը…»:

Այս խոսքում Պողոս առաքյալը մեզ հայտնում է, որ Տիրոջը պետք է տանք, նվիրենք, ընծայենք մեր մարմինները, բոլոր անդամները և ընդունակությունները՝ Նրան ծառայելու համար, որը մեր բանավոր պաշտոնն ու երկրպագությունն է:

Մենք ընծայման և նվիրման աղոթք ենք անում նաև այն ժամանակ, երբ մեր երեխաներին նվիրում ենք Աստծուն՝ խոստանալով մեծացնել նրանց «խրատով և Տիրոջ ուսմունքով» (Եփես. 6.4): Ինչպես Աստծուն նվիրում կամ ընծայում ենք մեր անձերը, մարմինները, մտքերը, որդիներին, դրամը, դիրքը, ճիշտ այդպես

էլ պետք է նվիրենք կամ ընծայենք մեր շուրթերը, որ մեզ առաջնորդում են աղոթքի:

Փառաբանության և երկրպագության աղոթք

«Ուստի, Նրա ձեռքով ամեն ժամանակ Աստծուն օրհնության պատարագ մատուցենք, այսինքն՝ Նրա անունը դավանող շրթունքների պտուղը»:

Եբրայեցիների 13.15

Կարծում եմ, որ բոլորս հասկանում ենք, թե ինչ է փառաբանությունը և երկրպագությունը: Իրականում, փառաբանությունը պատմում է Աստծո բարության, Նրա բոլոր բարի գործերի մասին, որ արել է մեզ համար:

Երկրպագությունը, պարզապես, պաշտում է Աստծուն, ընդունում Նրա արժանավորությունը: Երկրպագությունը ճանաչում է, թե ով է Աստված և ինչպիսին է Նա:

Ահա թե ինչու Եբրայեցիներին ուղղված թղթի հեղինակը մեզ ասում է, որ պետք է փառաբանենք և երկրպագենք Աստծուն ամեն ժամանակ: Ինչպես տեսնում ենք, փառաբանության և երկրպագության աղոթքը պետք է նման լինի շնչառության՝ շնչել և ար-

տաշնչել, գիշեր ու ցերեկ, որպե առ որպե: Մենք պետք է միշտ շնորհակալություն հայտնենք Աստծուն՝ շարունակաբար ընդունելով, դավանելով և մեծարելով Նրա անունը:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՍՊՈՒԹՔ

«Ամեն ժամանակ գոհացեք, որովհետև սա է Աստծո կամքը ձեզ համար՝ Հիսուս Քրիստոսում»:

Ա Թեսաղոնիկեցիների 5.18

Պողոս առաքյալը Թեսաղոնիկեցիներին ուղղված թղթի 5.17-ում անդադար աղոթքի մասին խոսելուց հետո մեր ուշադրությունն ուղղում է 18-րդ խոսքի վրա, որտեղ ասվում է. «Ամեն ժամանակ գոհացեք Աստծուց, որովհետև սա է Աստծո կամքը ձեզ համար՝ Հիսուս Քրիստոսում»: Ինչպես աղոթքը, այնպես էլ գոհունակությունը պետք է լինի մեր ապրելակերպը: Ամեն անգամ, երբ մտածում կամ հիշում ենք այն բոլոր բարի գործերի մասին, որ Աստված արել է մեզ համար, պետք է շնորհակալություն հայտնենք Նրան: Պարզապես ասեք. «Շնորհակալ եմ, Տեր»:

Կրոնավորությունն այն է, երբ պարտադրված ինչ-որ բան ենք անում՝ մտածե-

լով, որ Աստված է դա պահանջում: Ճշմարիտ երախտագիտությունը շարունակաբար հոսում է մարդու սրտից, որը լի է Աստծո նկատմամբ գոհությամբ և փառաբանությամբ: Մենք երախտապարտ ենք Աստծուն՝ Իր ով լինելու համար, առավել ևս Իր արածների համար: Մենք դա չենք անում Աստծո պահանջները բավարարելու, համակրանքը վաստակելու, հաղթանակ կամ օրհնություն ստանալու համար: Մենք երախտագիտություն ենք հայտնում Աստծուն, որ Նա ցանկանում է լինել մեր Հայրը: Երախտագիտության այս զգացումը մեր մեջ առաջացնում է Սուրբ Հոգին, Ով բնակվելով մեր մեջ՝ բառացիորեն արտահայտում է Աստծուն: Ճշմարիտ երախտագիտության արտահայտություն ենք տեսնում սաղմոսերգուի հետևյալ խոսքերում. «Գոհացեք տերերի Տիրոջից, որ հավիտյան է Նրա ողորմությունը» (Սաղմ.136.3):

Հոգով աղոթք

«Բայց դուք, սիրելինե՛ր, ձեր անձերը ձեր սուրբ հավատքի վրա շինե՛ք՝ Սուրբ Հոգով աղոթք անելով»:

Հուդա 20

Եփեսացիներին ուղղված թղթի 6.18-ում տեսանք, որ պետք է աղոթենք ամեն ժամանակ՝ աղոթքի տարբեր ձևերով, իսկ Հուդայի գիրքը մեզ հայտնում է, որ աղոթքները պետք է լինեն «Սուրբ Հոգով»: Աստծո Սուրբ Հոգին է մեզ մղում և առաջնորդում աղոթքի: Մենք պետք է սովորենք, առանց ուշացնելու, հետևել Սուրբ Հոգու առաջնորդությանը, հենց որ դա զգում ենք: Սա է ամեն ժամանակ տարբեր ձևերով աղոթել սովորելու բանալին:

Մի հին հոգևոր երգ կա, որի խոսքերը պետք է դառնան մեր նշանաբանը. «Ամեն անգամ, երբ իմ սրտում զգամ Սուրբ Հոգու շարժը, պիտի աղոթեմ»:

Եթե իմանանք, որ կարող ենք աղոթել ամեն ժամանակ և ամեն տեղ, չենք սպասի ճիշտ պահի կամ հատուկ վայրի՝ աղոթելու համար:

Համաձայնեցմանն աղոթք

«Դարձյալ ասում եմ ձեզ՝ եթե ձեզնից երկուսը երկրի վրա միաբանվեն, ինչի համար, որ խնդրեն, կլինի նրանց Իմ Հորից, որ Երկնքում է: Որովհետև որտեղ երկու

կամ երեք հոգի Իմ անունով հավաքված լի-
նեն, Ես այնտեղ՝ նրանց մեջ եմ»:

Մատթեոս 18.19,20

Համաձայնեցման աղոթքի մեջ զորություն կա: Աստվածաշունչը մեզ հայտնում է, որ եթե Աստված Իր ժողովրդի հետ է, մեկը կարող է հալածել հազարին, իսկ երկուսը՝ տասը հազարին (տե՛ս Երկր. Օր. 32.30): Բայց այս զորությունը միայն առկա է այն դեպքում, երբ Աստծո և միմյանց միջև համաձայնություն կա:

Բնականաբար, չենք կարող ամեն ժամանակ վիճել կամ կռվել միմյանց հետ, իսկ հետո աղոթքի մեջ համաձայնել որոշ կարիքների լուծման համար և ակնկալել, որ մեր «համաձայնեցման աղոթքը» արդյունավետ լինի: Պետրոսի առաջին թղթի 3.7-ում ասվում է. «Նմանապես, մարդի՛կ, իմաստությա՛մբ բնակվեք նրանց հետ՝ ինչպես տկար անոթի՝ կանանց պատիվ տալով, իբրև կյանքի շնորհքի ժառանգակիցների, որ ձեր աղոթքը չխափանվի»:

Միևնույն ձևով՝ չենք կարող ամբողջ շաբաթ բամբասել կամ դժգոհել մեր քարոզչից,

այնուհետև մոտենալ նրան և սպասել, որ համաձայնեցման աղոթք անի մեզ հետ՝ որոշ լուրջ անձնական խնդիրների համար:

Ինչո՞ւ: Որովհետև մենք համաձայնության մեջ չենք Աստծո և միմյանց հետ: Գիտե՞ք, թե ինչու է Աստված հարգում համաձայնեցման աղոթքը: Որովհետև Նա գիտի, թե ինչպիսի կոչ է դա, որ ստիպում է մեզ ապրել և քայլել համաձայնության մեջ: Նա հարգում է այն մարդկանց, ովքեր հետևում են այդ կոչին:

Եթե մենք համաձայնության գանք միմյանց և Աստծո հետ, մեր աղոթքի մեջ բազմապատկված զորություն կլինի՝ դարձնելով այն ավելի զորավոր ու արդյունավետ:

ՄԻԱԲԱՆՎԱԾ ԿԱՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՂՈԹՔ

«Սրանք բոլորը միշտ միաբան աղոթք և աղաչանք էին անում…»:

Գործք 1.14

Միաբանված և ընդհանուր աղոթքի մեջ մեծ զորություն կա: Գործք առաքելոց գրքում մենք տեսնում ենք, որ Աստծո մարդիկ միաբան էին (տե՛ս Գործք 2.1,46, 4.24, 5.12, 15.25):

Փիլիպեցիներին ուղղված թղթի 2.2-ում Պողոս առաքյալն ասում է. «Ապա լցրե՛ք իմ ուրախությունը, որ նույն միտքն ունենաք՝ նույն սերն ունենալով, միաշունչ միևնույնը խորհեք»:

Եթե ուշադրություն դարձնենք այս խոսքերին, լինենք ներդաշնակ ու համաձայն Աստծո և միմյանց հետ, կտեսնենք միևնույն զորության արդյունքները, որ առաջին դարի աշակերտներն էին տեսնում Գործք առաքելոցում:

ԲԱՐԵԽՈՍԱԿԱՆ ԱՂՈԹՔ

> «Արդ, աղաչում եմ՝ ամենից առաջ աղոթք անել՝ խնդրվածք, աղաչանք, գոհություն բոլոր մարդկանց համար»:
>
> Ա Տիմոթեոս 2.1

Ինչ-որ մեկի համար բարեխոսել նշանակում է նրա փոխարեն կանգնել Աստծո գահի առջև և խնդրել նրա իրավիճակի փոփոխության համար:

Պողոս առաքյալը Հռոմեացիներին ուղղված թղթի 8.26,27-ում մեզ հայտնում է, որ Սուրբ Հոգին բարեխոսում է մեզ համար՝ ըստ Աստծո կամքի:

Եբրայեցիներին ուղղված թղթի 7.25-ում կարդում ենք, որ Հիսուսը միշտ կենդանի է և բարեխոսություն է անում մեզ համար:

Պողոսը Տիմոթեոսին ուղղված առաջին թղթի 2.1-ում մեզ հորդորում է, որ բարեխոսենք «բոլոր մարդկանց համար»:

Բարեխոսությունն ամենակարևոր ձևերից մեկն է այս երկրի վրա՝ Հիսուս Քրիստոսի սկսած ծառայությունը շարունակելու համար:

Լուռ աղոթք

«... Սակայն Տերն Իր Սուրբ տաճարում է. լռի՛ր Նրա առջև, ո՛վ ամբողջ երկիր»:

Ամբակում 2.20

Այս աղոթքը կարելի է կոչել նաև «Տիրոջն սպասել»:

Դավիթը գիտեր «Տիրոջը սպասել»: Սաղմոս 27.4-ում նա գրում է հետևյալը. «Մեկ բան եմ խնդրում Տիրոջից և այն շա՛տ կփափագեի, որ Տիրոջ տանը բնակվեմ իմ կյանքի բոլոր օրերում, որ Տիրոջ գեղեցիկ փառքը տեսնեմ և Նրա տաճարին զննելով մտիկ տամ»:

Շատ կարևոր է սովորել «Տիրոջն սպասել», քանի որ շատ մարդիկ չեն հասկա-

նում, որ սպասումն աղոթքի կարևորագույն մասն է:

Աղոթքը ոչ միայն կատարում է, այլև սպասում: Աղոթքի ժամանակ ոչ միայն անընդմեջ խոսում են, այլև լսում:

ԽՆԴՐԱՆՔԻ ԱՂՈԹՔ

> «Ոչինչ հոգս մի՛ արեք, այլ ամեն բանում աղոթքով, աղաչանքով և գոհությունով ձեր խնդրանքները թող հայտնի լինեն Աստծուն»:
>
> Փիլիպեցիների 4.6

Խնդրանքի աղոթքով Աստծուն ենք ներկայացնում մեր կարիքները՝ խնդրելով, որ Նա բավարարի դրանք: Ես միշտ ասում եմ՝ ամենամեծ աղոթքը, որ ցանկացած մարդ կարող է անել, «Օգնի՛ր ինձ» աղոթքն է: «Օգնի՛ր ինձ, Աստվա՛ծ, օգնի՛ր ինձ, Աստվա՛ծ, օգնի՛ր ինձ, Աստվա՛ծ…»:

Ես շատ եմ աղոթում այս աղոթքը: Երբեմն գիշերն արթնանում եմ, գնում լոգասենյակ, ու թեև ոչ մի վատ բան չի պատահել, ինձ հայտնաբերում եմ հետևյալ խոսքերն աղոթելիս. «Ո՛վ Աստված, օգնի՛ր ինձ, օգնի՛ր

ինձ»: Ես հավատում եմ, որ ինձ Սուրբ Հոգին է առաջնորդում:

«Օգնի՛ր ինձ, Աստվա՛ծ...»: Սրանք զորավոր խոսքեր են: Եթե մենք ոչինչ էլ չկարողանանք անել, կարող ենք միշտ այսպես աղոթել: Եվս մեկ կարևոր աղոթք կա, որը շատ պարզ է. «Աստվա՛ծ, ես Քո կարիքն ունեմ»: Մենք մեծ փոփոխություններ կտեսնենք մեր կյանքում, եթե դադարենք ամեն բան ինքնուրույն անելուց:

Առակաց 3.5-7-ում գրված է. «Տիրոջն ապավինի՛ր քո ամբողջ սրտով և քո հասկացողությանը մի՛ վստահիր: Քո բոլոր ճանապարհներում ճանաչի՛ր Նրան, և Նա կուղղի քո ճանապարհները: Դու քո աչքի առջև իմաստուն մի՛ եղիր, վախեցի՛ր Տիրոջից և հեռացի՛ր չարից»:

Մի՛ սպասեք մինչև ձեր հիասթափվելը կամ փորձվելը, որպեսզի հասկանաք, որ չեք կարող ինքնուրույն որոշ գործեր անել՝ առանց Աստծո մոտ վազելու և օգնություն խնդրելու: Արե՛ք դա հենց սկզբից, նույնիսկ՝ նախքան ձեր փորձելը: Լիովի՛ն կառչած եղեք Աստծուց:

Սովորե՛ք աղոթել հետևյալ կերպ. «Տե՛ր, ես չեմ կարող սա անել, բայց Դու կարող ես: Արա՛ այս գործն իմ միջոցով: Ես ապավինում

և վստահում եմ Քեզ իմ ամբողջ սրտով ու մտքով: Տեր, օգնի՛ր ինձ, քանի որ ես Քո կարիքն ունեմ»:

Միայն այս փոքրիկ աղոթքը բավական է կյանքի վատթարագույն իրավիճակներում ձեզ օգնելու համար: Աստծուն դիմելը միայն մի քանի րոպե կխլի, բայց դա կարող է օգնել՝ խուսափելու մեր ամենօրյա շատ ձախողումներից, հատկապես, երբ գիտակցում ենք, որ առանց Աստծո չենք կարող ոչինչ անել: Երբ ասում ենք. «Տեր, ես ապավինո՛ւմ եմ Քեզ, խնդրո՛ւմ եմ, օգնի՛ր ինձ», խնդրանքի աղոթք ենք անում, որը շատ զորավոր է: Խնդրանքի աղոթքից հետո պետք է հավատանք, որ մեր կարիքները, ցանկությունները և իղձերը բավարարված կլինեն: Մենք պետք է հանգիստ լինենք՝ Աստծո հետ խոսելով ցանկացած խնդրի շուրջ: Հիշե՛ք, որ Նա շատ է սիրում մեզ և հետաքրքրված է այն ամենով, ինչ մեզ է վերաբերում:

Առաջնահերթ գործերը դրե՛ք առաջին տեղում

«Եվ եղավ, որ նրանք գնալիս՝ Ինքն էլ մի գյուղ մտավ, և մի կին՝ Մարթա անունով, ընդունեց Նրան իր տանը: Եվ նա մի

> քույր ուներ Մարիամ անունով, ով Հիսուսի ոտքերի մոտ նստեց և լսում էր Նրա խոսքերը: Մարթան էլ ծառայության համար շատ զբաղված էր, եկավ կանգնեց և ասաց. «Տե՛ր, հոգդ չէ՞, որ քույրս ինձ մենակ թողեց ծառայելու, ուրեմն ասա՛ նրան, որ օգնի ինձ»: Հիսուսը պատասխանեց և ասաց նրան. «Մարթա՛, Մարթա՛, դու հոգս ես քաշում և շատ բաներով զբաղված ես, բայց մեկ բան է պետք. Մարիամը բարի բաժինն ընտրեց, որ չի վերցվի նրանից»»:
>
> Ղուկաս 10.38-42

Դուք այժմ գիտակցում եք, որ կարող էիք ունենալ ավելի լավ աղոթքի կյանք, քան կարծում էիք: Տեսաք, որ թեև հրաշալի է որոշված ժամ կամ յուրահատուկ աղոթքի վայր ունենալ, բայց դուք կարող եք աղոթել ամեն ժամանակ, հատկապես՝ յուրաքանչյուր օրվա սկզբին: Իրականում, մեծ զորություն կա ամեն ժամանակ աղոթելու մեջ:

Զորավոր, արդյունավետ աղոթքի կյանք զարգացնելու համար պարզապես պետք է ժամանակ նվիրել՝ Աստծո ներկայության մեջ լինելու: Ահա թե ինչի շուրջ պետք է կենտրոնանա մեր՝ Քրիստոսի հետևորդներիս ապ-

ռելակերպը: Եթե մենք, նախքան մեր օրն սկսելը, որոշ ժամանակ ուղղակի նստենք Տիրոջ ներկայության մեջ և այդ ներկայության գիտակցությամբ ապրենք ամբողջ օրը, հրաշալի արդյունքներ կտեսնենք մեր կյանքում: Եթե դուք մտածում եք, որ ժամանակ չունեք, հիշե՛ք հետևյալ կանոնը. «Որքան զբաղված եմ լինում, այնքան շատ ժամանակ պետք է նվիրեմ Աստծուն: Եվ որքան շատ գործ պետք է անեմ, այնքան շատ ունեմ Նրա օգնության կարիքը»:

Եթե Մարթայի նման այնքան զբաղված եք, որ չեք կարող ժամանակ նվիրել Աստծուն, ապա դուք, պարզապես, շատ զբաղված եք: Դուք պետք է նմանվեք Մարիամին և սովորեք ժամանակավորապես հրաժարվել որոշ փոքր գործերից, որպեսզի կարողանաք նստել Տիրոջ ոտքերի մոտ և սովորել Նրանից:

Եթե այսպես անեք, Նրանից կստանաք Թագավորության բանալիները:

4

ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԼԻՆԵՐԸ

«Եվ Ես կտամ քեզ Երկնքի արքայության բանալիները...»:

Մատթեոս 16.19

4

Թագավորության բանալիները

«Եվ Հիսուսը դուրս գնաց Փիլիպպյան Կեսարիայի կողմերը և Իր աշակերտներին հարցնում էր ու ասում. «Մարդիկ Ինձ համար ի՞նչ են ասում, ո՞վ է Մարդու Որդին»: Նրանք էլ ասացին. «Ոմանք կարծում են, թե Հովհաննես Մկրտիչն է, իսկ մյուսները՝ Եղիան, ուրիշներն էլ՝ Երեմիան կամ մարգարեներից մեկը»: Նրանց ասաց. «Իսկ դուք ի՞նչ եք ասում Ինձ համար, ո՞վ եմ Ես»: Սիմոն Պետրոսը պատասխան տվեց և ասաց. «Դո՛ւ ես Քրիստոսը՝ կենդանի Աստծո Որդին»»:

Մատթեոս 16.13-16

Պետրոսը, հայտարարելով, որ Հիսուսն է կենդանի Աստծո Որդին, իր շուրթերից արձակեց այն հավատքը, որ իր սրտում կար: Մենք պետք է հասկանանք, որ մեր շուրթերից դուրս եկած խոսքերով հաստատում ենք մեր սրտում եղած հավատքը: Հռոմեա-

ցիներին ուղղված թղթի 10.10-ում գրված է. «Որովհետև սրտով հավատում ենք արդարանալու համար և բերանով դավանում ենք փրկվելու համար»:

Ահա թե ինչու է աղոթքը կարևոր: Մեր հռչակած խոսքերով մենք հաստատում ենք այն, ինչին հավատում ենք մեր ներսում: Ահա թե ինչու է կարևոր աղոթքի ժամանակ դավանել Սուրբ գրքի խոսքերը: Դրա միջոցով հոգևոր աշխարհում բաներ ենք հաստատում: Ի վերջո, այն, ինչ հաստատվում է հոգևորապես, կհայտնվի ֆիզիկապես: Մենք պետք է դավանենք Աստծո Խոսքը հաստատուն կերպով՝ ասելով. «Հայ՛ր, ես հավատում եմ Քեզ: Ես հավատում եմ, որ Դու ինձ այնքան շատ ես սիրում, որ մինչև իսկ Քո Միածին Որդուն՝ Հիսուսին ուղարկեցիր՝ խաչվելու ինձ համար», «Ես հավատում եմ, որ Դու ինձ լցրել ես Սուրբ Հոգով», «Ես հավատում եմ, որ Դու բարի ծրագիր ունես իմ կյանքի համար, և ես կարող եմ իրագործել դա», «Ես հավատում եմ, որ Քո օծությունն ինձ վրա է, ուստի կարող եմ ձեռքս դնել հիվանդների վրա, և նրանք կառողջանան, հրամայել դևերին, և նրանք կփախչեն», «Ես հավատում

եմ, որ Քո Խոսքի համաձայն՝ այն ամենը, ինչ ձեռնարկեմ, պիտի բարգավաճի և հաջողվի»:

Մենք պետք է շարունակենք հավատալ մեր սրտում և դավանել մեր բերանով այն, ինչ Աստված Իր Խոսքում ասել է մեր մասին: Եվ Նա ասել է, որ մեզ երկչոտության հոգի չի տվել, այլ՝ սիրո, զորության և զգաստության: Հետևաբար, մենք պետք է շարունակաբար դավանենք հետևյալը. «Ես չպե՛տք է վախենամ»:

ՀԱՎԱՏՔԸ ՊԵՏՔ Է ՀԱՂԹԻ

«Եվ Հիսուսը պատասխանեց նրան և ասաց. «Երանի՛ քեզ, Սիմո՛ն, Հովնանի՛ որդի, որովհետև մարմինը և արյունը չհայտնեցին քեզ, այլ՝ Իմ Հայրը, որ Երկնքում է: Ես էլ ասում եմ քեզ, որ դո՛ւ ես Պետրոսը, և այդ վեմի վրա կշինեմ Իմ եկեղեցին, և դժոխքի դռները չեն հաղթի նրան»»:

Մատթեոս 16.17,18

Ի՞նչ վեմի մասին է խոսում Հիսուսն այս հատվածում: Նա խոսում է հավատքի վեմի մասին: Հիսուսը Սիմոն Պետրոսին ասում է,

որ Իր եկեղեցին կկառուցի այն հավատքի հիման վրա, որ նա հենց նոր ցուցադրեց, և «դժոխքի դռները չեն հաղթի նրան» (խոսք 18): Սա նշանակում է, որ դժոխքի դռները չեն հաղթի այն անձնավորությանը, ով քայլում է հավատքով: Վախը գալիս է դժոխքից: Ահա թե ինչու է Հովհաննեսը մեզ հայտնում, որ «վախը տանջանք ունի» (Ա Հովհ. 4.18): Բայց երբ վախին հակառակվում ենք հավատքով, դժոխքը չի կարող հաղթել մեզ:

ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԼԻՆԵՐԸ

> «Եվ Ես կտամ քեզ Երկնքի արքայության բանալիները, և ինչ որ կապես երկրի վրա, կապված կլինի Երկնքում, և ինչ որ արձակես երկրի վրա, արձակված կլինի Երկնքում»:
>
> Մատթեոս 16.19

Հիսուսն ասում էր հետևյալը. «Ես տալիս եմ ձեզ զորություն և իշխանություն՝ երկրի վրա իրագործելու այն, ինչ տեղի է ունենում Երկնքում»:

Մատթեոս 6.10-ում Հիսուսն Իր աշակերտներին սովորեցրել էր աղոթել և ասել.

«Քո թագավորությունը գա, Քո կամքը լինի՝ ինչպես Երկնքում, այնպես էլ երկրի վրա»:

Հետագայում Մատթեոս 18.18-ում Նա Իր բոլոր աշակերտներին տվեց կապելու և արձակելու միևնույն զորությունը՝ ասելով. «Ճշմարի՛տ, ճշմարի՛տ ասում եմ ձեզ, ինչ որ երկրի վրա կապեք, Երկնքում էլ կապված կլինի, և ինչ որ երկրի վրա արձակեք, Երկնքում էլ արձակված կլինի»:

Այս խոսքերով՝ Հիսուսն Իր աշակերտներին հայտնում էր, որ նրանց զորություն և իշխանություն է շնորհում՝ օգտագործելու Երկնքի արքայության բանալիները, որ իրենց տրվել են Աստծո հաղթական կամքը երկրի վրա իրագործելու համար: Ես հավատում եմ՝ այդ բանալիները, որ Նա տվեց Պետրոսին, աշակերտներին և մեզ, տեղեկություններն են աղոթքի տարբեր տեսակների մասին, որ մենք ուսումնասիրում ենք:

ՋԵՐՄԵՌՈՒՆԴ ԱՂՈԹՔՆ ԱԶԴԵՑԻԿ Է

«... շատ զորավոր է արդարի աղոթքը՝ ներգործելով: Եղիան մարդ էր մեզ պես՝ կրքի ենթակա, և ջերմեռանդ աղոթք արեց, որ անձրև չգա, և անձրև չեկավ

երկրի վրա երեք տարի ու վեց ամիս: Եվ դարձյալ աղոթք արեց, և երկինքն անձրև տվեց, և երկիրն իր պտուղը բուսեցրեց»:

Հակոբոս 5.16-18

Ո՞վ իշխանություն և զորություն ունի ցանկացած կազմակերպության մեջ: Չէ՞ որ այն անձնավորությունը, ով ունի այդ կազմակերպության բանալիները: Ինչ են անում բանալիները: Դրանք փակում և բացում են: Ահա թե ինչ է նշանակում արձակել և կապել՝ բացել և փակել:

Օրինակ, երբ բարեխոսում ենք ինչ-որ մեկի համար, այդ անձնավորության կյանքում բացում ենք օրհնության պատուհանները և փակում դժոխքի դռները, որոնք նրան պահում էին կապանքների մեջ: Միևնույն ձևով, երբ Աստծուն շնորհակալական աղոթք ենք մատուցում, բացում ենք օրհնության պատուհանները մեր անձնական կյանքում:

Այսպիսով, մեզ շնորհված են Աստծո թագավորության բանալիները: Այս աղոթքի բանալիներով մենք իշխանություն և զորութուն ունենք իրագործելու Աստծո կամքը երկրի վրա՝ ինչպես որ Երկնքում է:

Ինչպիսի՞ պատեհություն:

Զարմանալի չէ, որ սատանան ցանկանում է մոլորեցնել մեզ այն մտքով, թե մեր աղոթքի կյանքն ազդեցիկ չէ: Մենք պետք է է՛լ ավելի զորանանք՝ շարունակելով օգտագործել աղոթքի բանալիները՝ նրա խավար թագավորությանը հաղթելու համար: Թույլ մի՛ տվեք, որ սատանան նվաստացնի ձեր աղոթքի կյանքը: Հավատացեք Աստծուն և կանչեք Նրա անունը ձեր աղոթքների մեջ՝ վստահելով, որ ձեր ջերմեռանդ, անկեղծ աղոթքները շատ ազդեցիկ են, քանի որ ձեր հավատքը հիմնված է Նրա՛ վրա, ոչ թե ձեր կարողությամբ սուրբ ապրելու և պերճախոս աղոթելու:

Աղոթքը՝ որպես պաշտվեր

> «Ոչինչ հոգս մի՛ արեք, այլ ամեն բանում աղոթքով, աղաչանքով և գոհությունով՝ ձեր խնդրանքները թող հայտնի լինեն Աստծուն»:
>
> Փիլիպեցիների 4.6

Մենք անդրադարձանք այս խոսքին, երբ խոսում էինք խնդրանքի աղոթքի մասին: Վերոհիշյալ խոսքում «խնդրանք» բառը կարելի է հասկանալ և՛ պարզ խնդրանք,

և պատվեր իմաստով: Պատվերը՝ պահանջ կամ խնդրանք է՝ ինչ-որ բանի համար, որ անձը օրինական կերպով լիազորված է ստանալու, բայց դեռևս չունի: Բանակում սպան համազգեստ է պատվիրում՝ իր զինվորներին ապահովելու համար: Նա, որպես Միացյալ Նահանգների բանակում իշխանություն ունեցող գործիչ, լիազորված է այդ նյութական միջոցները տնօրինելու համար, բայց նախքան դրանք ստանալը՝ պետք է պարզ խնդրանք կամ պատվեր ներկայացնի:

Աստված ինձ ցույց տվեց, որ երբ մենք աղոթում ենք, Իրենից խնդրում կամ պատվիրում ենք այն, ինչ Նա արդեն իսկ նախապատրաստել է մեզ ապահովելու համար, երբ կարիք լինի:

Թո՛ւյլ տվեք օրինակ բերել մեր կյանքից: Մենք իրավունք ունենք բանկից գումար ստանալու: Բայց դրա համար պետք է գրավոր խնդրանք ներկայացնենք բանկին՝ մեզ դրամ հատկացնելու վերաբերյալ՝ նշելով դրամի չափը և օգտագործման նպատակը:

Նույնկերպ, երբ մեր ծառայության ղեկավարները մոտենում են ամուսնուս, ով մեր ֆինանսական գծով ծառայողն է, և խնդրում

են որոշակի գումար հատկացնել իրենց բաժինների համար, նախապես պետք է պատվիրեն կամ գրավոր խնդրանք ներկայացնեն՝ հայտնելով անհրաժեշտ դրամի չափը և օգտագործման նպատակը: Դա պարտադիր է՝ չնայած դրամը հավաքվում է հենց այդպիսի նպատակների համար:

Ահա թե ինչ է աղոթքը՝ երկնային պատվեր, որը ներկայացնում ենք Աստծուն այն ամենի համար, ինչ մեզ պետք է մեր առօրյայում և ծառայության մեջ:

ԽՆԴՐԵ՛Ք ՀԻՍՈՒՍԻ ԱՆՈՒՆՈՎ

«Եվ դուք էլ հիմա տրտմություն ունեք, բայց դարձյալ կտեսնեմ ձեզ, և ձեր սիրտը կուրախանա, և ձեր ուրախությունը ոչ ոք չի վերցնի ձեզնից: Եվ այն օրը ոչինչ չեք հարցնի Ինձ. ճշմարիտ, ճշմարիտ ասում եմ ձեզ, թե՝ ինչ որ Հորից խնդրեք Իմ անունով, կտա ձեզ»:

Հովհաննես 16.22,23

Աստվածաշունչը մեզ ուսուցանում է, որ Աստված ամեն ինչ գիտի մեր մասին (տե՛ս Սաղմ. 139.1-6): Նա գիտի, թե ինչի կարիք

ունենք՝ նախքան մեր խնդրելը (տես Մատթ. 6.8,32): Դեռ ավելին՝ Նա պատվիրել է, որ խնդրենք Իրենից (տես Մատթ. 7.7):

Մենք չենք ստանում այն, ինչ ուղղակի ցանկանում ենք: Մարդիկ երբեմն ասում են. «Ես ցանկանում եմ ունենալ շատ դրամ, կամ՝ ես ցանկանում եմ ազատվել գլխացավից, կամ՝ ես ցանկանում եմ ապրել՝ առանց վախի»: Սա երկնային պատվեր չէ:

Ըստ Հակոբոս 1.5-8 խոսքերի՝ մենք վստահությամբ պետք է խնդրենք մեր կարիքների համար՝ հավատալով, որ կստանանք այն, ինչ խնդրել և պատվիրել ենք Աստծո օրհնության գանձարանից:

Հովհաննեսի Ավետարանի 16-րդ գլխում Հիսուսը խոսում էր Իր աշակերտների հետ՝ նախքան խաչվելը: Նա պարզեցնում էր մի կարևոր բան, որ երբ մենք աղոթում ենք, ոչ միայն պետք է հավատանք, այլև պետք է խնդրենք Իր անունով:

Սա չի նշանակում, որ «Հիսուսի անունով» արտահայտությունը պետք է ուղղակի կցենք ամեն նախադասության վերջում: Եթե զգոն չլինենք, կարող ենք դառնալ կրոնավոր՝ ամեն նախադասությունից հետո

ասելով՝ Հիսուսի անունով, ալելուիա, փա՛ռք Աստծուն… Նման դեպքում այս խոսքերը շատ շուտ կորցնում են իրենց նշանակությունը: Հիսուսը սրա մասին չէր խոսում: Նա խոսում էր Իր անվան զորության և իշխանության օգտագործման մասին, որպեսզի Աստծո կամքն իրագործենք երկրի վրա՝ ինչպես որ Երկնքում է: Նա խոսում էր Հորը՝ Աստծուն, Իր ստորագրությամբ խնդրանք կամ պատվեր ներկայացնելու մասին, որի համար պետք է ծառայենք Իր թագավորության մեջ:

Մեր ծառայության մեջ աշխատողներն արժանանում են արձակուրդի, որն օրինապես պատկանում է իրենց: Բայց նույնիսկ այդ դեպքում նրանք չեն կարող օգտվել իրենց արձակուրդից՝ մինչև դիմում չներկայացնեն դրա մասին:

Մենք ունենք Երկնքում դիզված ժառանգություն, որի համար վճարվել է Հիսուս Քրիստոսի արյամբ (տե՛ս Եփես. 1.11,12): Դա օրինական ձևով պատկանում է մեզ: Բայց երբեմն խնդիրն այն է, որ մենք պատվեր չենք ներկայացնում դրա համար: Եթե մեր ծառայության աշխատակիցը պատվեր է ներկայացնում Դեյվին՝ մեր ֆինանսների

կառավարչին, սակայն չի ստանում իր հասանելիք արձակուրդը, շուտով նա կրկին մոտենում է Դեյվին և հարցնում. «Դու կորցրե՞լ ես իմ պատվերը: Ե՞րբ եմ ստանալու այն, ինչ օրինապես ինձ է պատկանում»:

Երբ մենք խնդրանք կամ պատվեր ենք ներկայացնում Աստծուն՝ Հիսուսի անունով, և չենք ստանում այն, ինչ հավատքով խնդրել ենք, իրավունք ունենք մոտենալու Աստծուն և հարցնելու. «Հա՛յր, Դու չես մոռացել իմ պատվերի մասին, այդպես չէ՞»: Սա ոչ թե անամոթություն է, այլ հավատք: Իրականում, Աստված հարգում է այս հավատքի քայլը, քանի որ դա ցույց է տալիս, որ մենք սպասում ենք Իրեն՝ պահելով Իր Խոսքը, որովհետև Նա հավատարիմ է:

Օգտագործե՛ք Հիսուսի անունը

> «Մինչև հիմա ոչինչ չխնդրեցիք Իմ անունով. խնդրե՛ք և կառնեք, որ ձեր ուրախությունը կատարյալ լինի»:
>
> Հովհաննես 16.24

Հիսուսը մեզ պատվիրեց խնդրել Իր անունով, որպեսզի կարողանանք ընդունել,

և մեր ուրախությունը կատարյալ լինի: Ես համոզված եմ, որ այսօր հավատացյալների կյանքում ուրախության պակասի հիմնական պատճառներից մեկը՝ աղոթքի պակասն է: Աղոթքի պակասի հիմնական պատճառն այն է, որ Աստծո մարդիկ փորձում են մարմնով անել այն, ինչի համար պետք է աղոթեն և խնդրեն Աստծուն, որ Նա անի իրենց միջոցով կամ իրենց փոխարեն:

Հիսուսն աշակերտներին ասում էր, որ Իր հարություն առնելուց հետո որոշ բաներ կփոխվեն: Նա ասում էր, որ նրանք կունենան նոր զորություն և իշխանություն, որ նախքան Իր մահը և հարությունը երբևէ չեն ունեցել: Նա ասում էր, որ երբ այդ ժամանակը գա, նրանք Իրենից որևէ բան չեն խնդրի, այլ կարող են գնալ Հոր մոտ, և Նա կշնորհի այն ամենը, ինչ կխնդրեն Իր անունով:

Ինչ է նշանակում՝ խնդրել Հիսուսի անունով: Ըստ Հովհաննեսի Ավետարանի 16.24-ի՝ Հիսուսի անունով աղոթքը պետք է ներկայացնի Հիսուսին: Հիմնական պատճառներից մեկը, որ մենք տկար ենք աղոթքի մեջ այն է, որ գնում ենք Աստծո մոտ՝ փորձելով ցուցադրել, թե ինչպիսին ենք: Եվ եթե որևէ

ձևով մեղանչել ենք Նրա առջև, կարծում ենք, թե ոչինչ չունենք ներկայացնելու, որը Նրան կմղի՝ գործելու մեզ համար:

Աստվածաշունչն ասում է, որ Աստծո աչքին մեր ամեն արդարությունը կեղտոտ լաթի պես է (տե՛ս Եսայի 64.6): Այսպիսով, չկա որևէ բան, որ կարող ենք ներկայացնել Աստծուն, բացի Հիսուսի արյունից: Ահա թե ինչու եմ այդքան ոգևորված իմ հեղինակային գրքով, որը կոչվում է «Խոսքը, Անունը և Արյունը», որտեղ քննարկվում է հենց այս թեման:

Երբ գալիս ենք Աստծո շնորհքի գահի առջև, որը ծածկված է Հիսուսի արյամբ, և խնդրում ենք վստահությամբ՝ Իր Խոսքի համաձայն և Իր Որդու՝ Հիսուս Քրիստոսի անունով, կարող ենք իմանալ, որ մեր խնդրանքն ընդունված է: Ոչ թե այն պատճառով, որ մենք կատարյալ ենք, կամ՝ Աստված պարտական է մեզ ինչ-որ բանում, այլ՝ որ Նա սիրում է մեզ և ցանկանում է շնորհել այն, ինչ պետք է՝ անելու այն գործը, որի համար Նա մեզ կանչել է:

Զորություն կա Հիսուսի անվան մեջ: Հիսուսի անունով՝ պիտի խոնարհվի ամեն ծունկ Երկնքում, երկրի վրա և երկրի ընդերքում: Այդ

անվան զորությամբ մենք պետք է ձեռք դնենք հիվանդների վրա, և նրանք պիտի առողջանան, պետք է դևեր հանենք, և նրանք պիտի փախչեն, պետք է անենք այն նույն գործերը, որ Հիսուսն էր անում, և նույնիսկ՝ ավելի մեծ գործեր անենք՝ Աստծո փառքի համար (տես Մարկ. 16.17,18, Հովհ. 14.12):

Հիսուսը փառավոր ժառանգություն է գնել մեզ համար՝ հեղելով Իր արյունը: Մենք այժմ Նրա հետ ժառանգակիցներ ենք (տես Հռոմ. 8.17): Այն ամենը, ինչ Նա վաստակել է Իր զոհաբերությամբ, Երկնքում դիզված է մեզ համար: Մենք ունենք այդ գանձարանի բանալիները, որոնք աղոթքի տարբեր տեսակներն են:

Մենք չպետք է ապրենք վախի և պակասության մեջ: Եկեք օգտագործե՛նք այդ բանալիները և բացե՛նք դռները, որպեսզի երկնային օրհնությունները թափվեն մեզ վրա՝ Աստծո փառքի համար: Եկեք թո՛ւյլ տանք, որ Նրա աստվածային կամքն իրագործվի երկրի վրա՝ ինչպես որ Երկնքում է, որպեսզի մեր ուրախությունը կատարյալ լինի:

Ամփոփում

Վախն Աստծուց չէ: Վախը սատանայից է: Միակ ընդունելի դիրքորոշումը, որ քրիստոնյան կարող է ունենալ վախի հանդեպ, հետևյալն է. «Վախն Աստծուց չէ, և ես չեմ հաշտվի դրա հետ՝ թույլ տալով ղեկավարել իմ կյանքը: Ես կհակառակվեմ վախին, քանի որ այդ ոգին ուղարկվել է դժոխքից՝ ինձ տանջելու համար»: Ես հաճախակի ասում եմ, որ վախը՝ ոգի է, որի միջոցով սատանան Աստծո մարդկանց թույլ չի տալիս գտնվել ճշմարիտ Ուսուցչի՝ Հիսուս Քրիստոսի ղեկավարության ներքո:

Ես հավատում եմ, որ Աստված նուրբ աշխատանք է տանում մեզ հետ որոշ ոլորտներում, որպեսզի կապանքից դուրս բերի ազատության մեջ: Աստվածաշունչն ուսուցանում է, որ չվախենանք: Ինչպես սկզբում նշեցի, իմ անձնական կյանքի իրադարձություններն ինձ օգնեցին հասկանալու, որ «չվախենալ» նշանակում է «չփախչել»: Ես քաջալերում եմ, որ ճեղքեք վախի մթնոլորտը և անեք այն,

ինչ պետք է անեք, եթե նույնիսկ կարիք լինի անելու «վախենալով»: Մի՛ փախչեք վախից, այլ հակառակվե՛ք վախին՝ հավատքով և աղոթքով:

Հիշե՛ք, որ Աստված ցանկանում է ազատագրել ձեզ ամեն վախից:

ՎԱԽ նշանակում է՝ սխալ փաստարկը ներկայացնել որպես ճիշտ:

Մաս 2

ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ԽՈՍՔԵՐ

Սուրբգրային խոսքեր՝ վախը հաղթահարելու համար

«... Մի՛ վախեցեք, կանգնե՛ք և տեսե՛ք Եհովայի փրկությունը, որ այսօր կանի ձեզ համար...»:

Ելից 14.13

«Տե՛ս, Քո Եհովա Աստված այդ երկիրը քեզ է տվել. վե՛ր ելիր, ժառանգի՛ր, ինչպես քո հայրերի Եհովա Աստված քեզ ասաց: Մի՛ վախեցիր և մի՛ զարհուրիր»:

Երկրորդ Օրինաց 1.21

«Ուժովացե՛ք և քա՛ջ եղեք, մի՛ վախեցեք և նրանց երեսից մի՛ զարհուրեք, որովհետև Եհովա Աստված Ի՛նքն է քեզ հետ գնում. Նա քեզ չի՛ թողնի և չի՛ ձգի»:

Երկրորդ Օրինաց 31.6

«Ահա քեզ պատվիրում եմ՝ զորացի՛ր և քա՛ջ եղիր, մի՛ վախեցիր և մի՛ զարհուրիր, որովհետև քո Տեր Աստված քեզ հետ է ամեն տեղ՝ ուր որ գնաս»:

Հեսու 1.9

«Մի՛ վախեցիր, որովհետև Ես քեզ հետ եմ, մի՛ վեհերիր, որովհետև Ես քո Աստվածն եմ: Ես զորացրել եմ քեզ, նաև օգնել եմ քեզ, նաև հաստատել եմ քեզ Իմ արդարության աջով... Որովհետև Ես՝ Եհովաս՝ Քո Աստվածը, զորացնում եմ քո աջը, որ ասում եմ քեզ՝ մի՛ վախեցիր, Ես կօգնեմ քեզ»:

Եսայի 41.10,13

«Եվ հիմա այսպես է ասում Տերը՝ քեզ Ստեղծողը, ո՛վ Հակոբ, և քո Արարիչը, ո՛վ Իսրայել, մի՛ վախեցիր, որովհետև Ես քեզ փրկել եմ, քո անունով կանչել եմ, թե դու Իմն ես: Երբ որ ջրերով անցնես, Ես քեզ հետ եմ, և եթե գետերով՝ դրանք քեզ չեն ողողի, երբ որ գնաս կրակի միջով, չես այրվի, և բոցը քեզ չպիտի վառի»:

Եսայի 43.1,2

«Որովհետև դուք ծառայության հոգին չառաք, որ դարձյալ վախենաք, այլ՝ որդեգրության հոգին առաք, որով աղաղակում ենք՝ Աբբա՛, Հա՛յր»:

Հռոմեացիների 8.15

«Եվ ոչ մի բանով մի՛ զարհուրեք հակառակորդներից, որ դա նրանց համար նշան է կորստի, իսկ ձեզ համար՝ փրկության»:

Փիլիպեցիների 1.28

«Ոչինչ հոգս մի՛ արեք, այլ ամեն բանում աղոթքով, աղաչանքով և գոհությունով ձեր խնդրանքները թո՛ղ հայտնի լինեն Աստծուն: Եվ Աստծո խաղաղությունը, որ ամեն մտքից վեր է, կպահպանի ձեր սրտերն ու մտքերը Քրիստոս Հիսուսում»:

Փիլիպեցիների 4.6,7

«Որովհետև Աստված չտվեց մեզ երկչոտության հոգի, այլ՝ սիրո, զորության և զգաստության»:

Բ Տիմոթեոս 1.7

«Վարքն առանց արծաթասիրության լինի, բավակա՛ն համարեք այն, ինչ ձեռքնեռումդ ունեք, որովհետև Ինքն ասաց, թե՝ չեմ թողնի քեզ և երեսից չեմ գցի: Այնպես որ, համարձակ ենք ասելու՝ Տերն է իմ օգնականը, և ես չեմ վախենա, ի՞նչ կանի ինձ մարդը»:

Եբրայեցիների 13.5,6

«Վախ չկա սիրո մեջ, այլ՝ կատարյալ սերը հեռացնում է վախը, քանի որ վախը տանջանք ունի, բայց նա, ով վախենում է, կատարյալ չէ սիրո մեջ»:

Ա Հովհաննես 4.18

Աղոթք՝ վախի դեմ պայքարելու համար

Ո՛վ Աստված, ազատագրի՛ր ինձ վախից: Օգնի՛ր ինձ, որ լինեմ խիզախ և ունենամ սուրբ համարձակություն: Օգնի՛ր ինձ, որ չվախենամ, այլ առաջ գնամ և ունենամ այն, ինչ Դու ես ցանկանում, որ ունենամ:

Օգնի՛ր ինձ՝ ճանաչելու, թե որքան ես ինձ սիրում, քանի որ կատարյալ սերը (Քո սերը իմ հանդեպ) կհեռացնի ամեն վախ՝ Հիսուսի անունով, ամե՛ն:

Աղոթք՝ Աստծո հետ
Անձնական հաղորդակցման համար

Եթե դուք երբեք չեք հրավիրել Հիսուսին՝ Խաղաղության Իշխանին, որ դառնա ձեր Տերը և Փրկիչը, ձեզ հորդորում եմ, որ դա անեք հիմա: Աղոթե՛ք հետևյալ աղոթքը, և եթե իսկապես անկեղծ եք, նոր կյանք կսկսեք՝ Քրիստոսով:

Հա՛յր, Դու այնպես սիրեցիր աշխարհը, որ տվեցիր Քո Միածին Որդուն՝ մեռնելու մեր մեղքերի համար, որ ամեն Նրան հավատացողը չկորչի, այլ հավիտենական կյանք ունենա: Քո Խոսքն ասում է, որ մենք փրկված ենք շնորհքով՝ հավատքի միջոցով, և դա Քո պարգևն է: Մենք ոչինչ չենք կարող անել փրկությունը վաստակելու համար:

Ես հավատում և դավանում եմ, որ Հիսուս Քրիստոսը Քո Որդին է՝ աշխարհի Փրկիչը: Հավատում եմ, որ Նա վերցրեց իմ բոլոր մեղքերը, մահացավ խաչափայտին ինձ համար՝ վճարելով մեղքերիս գինը: Հա՛յր, ես

հավատում եմ, որ Դու Հիսուսին հարություն տվեցիր մեռելներից:

Խնդրո՛ւմ եմ, որ ներես իմ մեղքերը: Ես դավանում եմ Հիսուսին որպես իմ Տեր: Ըստ Քո Խոսքի՝ ես փրկված եմ և հավիտենությունը կապրեմ Քեզ հետ: Շնորհակալություն, Հա՛յր: Ես երախտապարտ եմ Քեզ՝ Հիսուսի անունով, ամե՛ն:

Ուշադրություն դարձրեք հետևյալ խոսքերին՝ Հովհաննես 3.16, Եփեսացիների 2.8,9, Հռոմեացիների 10.9,10, Ա Կորնթացիների 15.3,4, Ա Հովհաննես 1.9, 4.14-16, 5.1,12,13:

ՀԵՂԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ

Ջոյս Մայերն Աստծո Խոսքն ուսուցանում է դեռևս 1976 թվականից և ամբողջական ծառայության է անցել 1980 թվականից: Որպես հովվի գործակից «Կյանք» Քրիստոնեական կենտրոնում, որը գտնվում է Միսսուրիի Լյուիս քաղաքում, նա զարգացրել, կոորդինացրել և սովորեցրել է «Կյանք՝ Խոսքի մեջ» անվանումով շաբաթական հավաքույթներում: Հինգ տարի անց Աստված այդ աշխատանքն ավարտին է մոտեցնում՝ առաջնորդելով նրան հաստատելու իր անձնական ծառայությունը և այն կոչելու «Կյանք՝ Խոսքի մեջ» անունով:

Ջոյսի «Կյանք՝ Խոսքի մեջ» ռադիոհաղորդումը հեռարձակվում է ավելի քան 250 ազգային ռադիոկայաններով: 1993 թվականին հեռարձակվեց «Կյանք՝ Խոսքի մեջ՝ Ջոյս Մայերի հետ» 30 րոպեանոց հեռուստածրագիրը, որը տարածվեց ամբողջ Միացյալ Նահանգներով, ինչպես նաև մի քանի արտասահմանյան երկրներով: Նրա ուսուցողական տեսահոլովակներից օգտվում են

շատ երկրներում: Նա հաճախ է ճամփորդում՝ ուսուցանելով «Կյանք՝ Խոսքի մեջ» խորագրով կոնֆերանսների ընթացքում՝ հանդես գալով տեղական եկեղեցիներում: Ջոյսը և ամուսինը՝ Դեյվը, ով «Կյանք՝ Խոսքի մեջ» ծառայության ֆինանսների կառավարիչն է, ամուսնացել են ավելի քան 31 տարի առաջ և ունեն չորս երեխա: Երեքն ամուսնացած են, իսկ կրտսեր որդին ներկայումս իրենց հետ ապրում է Ֆենտոնում, Միսսուրիի Լյուիս քաղաքի արվարձանների մոտ:

Ջոյսը հավատում է, որ իր կյանքի կոչումը՝ հավատացյալներին Աստծո Խոսքի մեջ հաստատելն է: Նա ասում է. «Հիսուսը մահացավ, որ ազատի գերիներին, բայց կան քրիստոնյաներ, որոնք շատ քիչ հաղթություններ ունեն կյանքում, կամ էլ, առհասարակ, չունեն»: Շատ տարիներ առաջ իրեն հայտնաբերելով նույն իրավիճակում և Աստծո Խոսքը կիրառելով՝ նա ձեռք է բերում ազատություն: Ապրելով հաղթության կյանք՝ Ջոյսը սպառազինվում է՝ գերիներին ազատելու և «մոխրի փոխարեն փառք» բերելու:

Ջոյսը շնչավոր բժշկության վերաբերյալ և դրա հետ կապված թեմաներով ուսուցանել է

տարբեր երկրներում՝ օգնելով հազարավոր մարդկանց: Նա ձայնագրել է ավելի քան 165 տարբեր ձայներիզների ալբոմ, և հեղինակ է 25 գրքերի, որոնք արժեքավոր են Քրիստոսի մարմնի համար: Նրա «Շնչավոր բժշկության ձևավորում»-ը ունի 23 ուսուցման ժամեր: Այս ծրագրում ներկայացնում է հետևյալ նյութերը՝ «Վստահություն», «Մոխրի տեղ՝ փառք» (ներառում է ծրագիր), «Ղեկավարել զգացմունքները», «Վրդովմունք, վիրավորվածություն և աններողամտություն», «Մերժվածության արմատը» և «Բժշկել սրտով կոտրվածներին» 90 րոպեանոց աստվածաշնչյան խոսքերից կազմված ձայնասկավառակը:

Ջոյսի «Մտքի ձևավորում» գիրքը նկարագրում է մտքի թեմային նվիրված հինգ տարբեր ձայներիզային քարոզչություններ, որոնք ներառում են «Մտավոր ամրոցներ և մտածողություններ», «Անապատային մտածողություն», «Մարմնավոր միտք», «Անհանգստություն և մտահոգված միտք», «Միտք, բերան, տրամադրություն և դիրք» թեմաները: Փաթեթը նաև պարունակում է Ջոյսի «Միտքը կռվի դաշտն է» 260 էջանոց

հզոր գիրքը: Նա ունի սիրո թեմային նվիրված երկու տեսաժապավենային քարոզչություն՝ «Սերը՝...» և «Սերը՝ որպես բարձրագույն զորություն» վերնագրերով:

Գրեք Ջոյս Մայերի աշխատասենյակ՝ նյութերի, կատալոգների և մանրամասն տեղեկությունների համար, եթե ձեզ հետաքրքրում է, թե ինչպես ձեռք բերել այն տեսաժապավենները, որոնց կարիքն ունեք՝ ձեր կյանքում կատարյալ բժշկություն բերելու համար: